



Հաճախ կիրառվող բանկային հասկացություններ

Ավանդ՝ դրամական միջոցներ, որոնք Դուք որոշ ժամկետով տրամադրում եք Բանկին, որի դիմաց Բանկը վճարում է Ձեզ տոկոսներ: Տվյալ դեպքում Դուք կոչվում եք **Ավանդատու**: Նշված ժամկետը լրանալուց հետո Բանկը վերադարձնում է Ձեզ գումարը և հաշվեգրված տոկոսները: Ժամկետը, տոկոսադրույքը և այլ էական պայմանները սահմանվում են Ձեր և Բանկի միջև կնքված պայմանագրով: Ավանդային պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով:

Ավանդները լինում են 2 տեսակի՝ ցպահանջ և ժամկետային:

- **Ցպահանջ ավանդի** պայմանագիրը կնքվում է ավանդն առաջին իսկ պահանջով վերադարձնելու պայմանով: Սա նշանակում է, որ Դուք Ձեր գումարը տրամադրում եք բանկին ոչ թե նախապես պայմանավորված որոշակի ժամկետով, այլ պայմանով, որ ցանկացած պահի կարող եք ետ վերցնել Ձեր գումարը:
- **Ժամկետային ավանդի** պայմանագիրը կնքվում է ավանդը որոշակի ժամկետի ավարտից հետո վերադարձնելու պայմանով (ենթադրվում է, որ այդ ժամկետի ընթացքում Դուք մտադիր չեք ետ պահանջել Ձեր գումարը): Սակայն կարևոր է իմանալ, որ Դուք, միևնույնն է, կարող եք եղ վերցնել Ձեր ավանդը մինչև ավանդային պայմանագրի ժամկետը լրանալը: Այս դեպքում նույնպես Բանկը պարտավորվում է Ձեզ վերադարձնել Ձեր ներդրած գումարն ամբողջությամբ, **սակայն հնարավոր է**, որ այդ դեպքում Բանկը կատարի տոկոսների վերահաշվարկ և Դուք ստանաք նախատեսվածից ավելի քիչ տոկոսագումար կամ ընդհանրապես չստանաք տոկոսագումար:

Ժամկետային ավանդի համար սահմանված տոկոսադրույքն ավելի բարձր է լինում, քան ցպահանջ ավանդի դիմաց, որովհետև ժամկետային ավանդները ներդրվում են ավելի երկար ժամկետով:

Ձեր ընտրությամբ ավանդի դիմաց տոկոսները կարող եք ստանալ պարբերաբար կամ միանվագ՝ ավանդի ժամկետի վերջում, որի դեպքում բանկերը սահմանում են ավելի բարձր տոկոսադրույք:

Ավանդների հետ կապված կարևոր է իմանալ նաև հետևյալ հասկացությունները:
Տարեկան տոկոսային եկամտաբերություն՝ այն տոկոսը, որը Դուք կստանաք 1000 դրամ ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով:

Տարեկան պարզ տոկոսադրույքի չափ՝ տարեկան կտրվածքով հաշվարկված տոկոսադրույքի չափը, որը վճարվում է տոկոսների կապիտալացման յուրաքանչյուր գործընթացի ժամանակ.

ՀՀ բոլոր բանկերում Ձեր ավանդների վերադարձն երաշխավորված է օրենքով՝ դրամային ավանդների դեպքում առավելագույնը 10 մլն. ՀՀ դրամի, իսկ արտարժույթային ավանդների դեպքում՝ առավելագույնը 5 մլն. ՀՀ դրամին համարժեք գումարի չափով:

Ավանդների հատուցումն երաշխավորող հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է, որի հիմնադրման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության և հուսալիության ապահովումն է՝ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու միջոցով: Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է:

Հիմնադրամի մասին լրացուցիչ տեղեկություն ստանալու համար կարող եք մուտք գործել www.adgf.am կայք:

Բանկային հաշիվ՝ բանկային հաշիվ բացելիս, բանկը պարտավորվում է ընդունել և Ձեր հաշվին մուտքագրել մուտք եղող դրամական միջոցներ, իրականացնել հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործանություններ կատարելու Ձեր կողմից տրված կարգադրությունները: Բանկային հաշվի պայմանագիրը կնքվում է միայն գրավոր ձևով:

Վարկ՝ դրամական միջոցներ, որոնք Բանկը որոշակի ժամկետով և պայմաններով տրամադրում է Ձեզ, իսկ Դուք պարտավորվում եք վերադարձնել Բանկին տրամադրված գումարը և վճարել տոկոսներ: Տվյալ դեպքում Բանկը հանդիսանում է **Վարկատու**, իսկ Դուք՝ **Վարկառու**: Ժամկետը, տոկոսադրույքը և այլ էական պայմանները սահմանվում են Ձեր և Բանկի միջև կնքված վարկային պայմանագրով: Վարկային պայմանագիրը միշտ կնքվում է գրավոր ձևով:

Եթե Դուք ստանում եք վարկը միայն անձնական, ընտանեական, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված և ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված (*բացառությամբ գյուղատնտեսական նշանակության վարկերի*) ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով, ապա այդ դեպքում Դուք կոչվում եք **Սպառող**, իսկ Ձեզ տրամադրված վարկը՝ **սպառողական վարկ**:

Վարկերի տեսակների մասին ավելի հանգամանորեն կարող եք ծանոթանալ <https://www.abcfinance.am> կայքում:

Վարկերի հետ կապված կարևոր է իմանալ նաև հետևյալ հասկացությունները:

Տարեկան անվանական տոկոսադրույք՝ Բանկի կողմից սահմանված այն տոկոսադրույքը, որի հիման վրա հաշվարկվում է վարկի տոկոսավճարների մեծությունը:

Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ սպառողի վարկավորման ընդհանուր ծախսը՝ արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով:

Սպառողի վարկավորման ընդհանուր ծախսը՝ բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել (կատարել) վարկավորման համար:

Մտածելու ժամանակ՝ այն ժամանակը, որի ընթացքում Դուք իրավունք ունեք առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը (օրենքով սահմանված է պայմանագրի կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օր):

Վերանայված պայմաններով վարկ՝ վարկ, որը պայմանագրի համաձայն վերաֆինանսավորվել է կամ դրա ժամկետը կամ այլ պայմանները վերանայվել են (վերաձևակերպվել են)՝ վարկառուի համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:

Վերաֆինանսավորված վարկ՝ վարկ, որի մի մասի մարումն իրականացվել է նոր տրամադրված վարկի հաշվին, անկախ այն հանգամանքից, նոր վարկը տրամադրվել է նույն բանկում, թե այլ բանկում:

Վարկային բյուրո՝ կազմակերպություն, որն իրավունք ունի տրված լիցենզիայի հիման վրա իրականացնելու վարկային տեղեկատվության, դրա համար անհրաժեշտ այլ տվյալների հավաքման, վարկային պատմությունների մշակման, ձևավորման և պահպանման, դրանց հիման վրա վարկային զեկույցի պատրաստման գործունեություն:

Վարկային պատմություն՝ վարկային բյուրոյի կողմից ձևավորած և (կամ) մշակած վարկային տեղեկատվությունը:

Բանկային քարտ՝ գործիք, որը Ձեզ հնարավորություն է տալիս ստանալ աշխատավարձ կամ այլ դրամական միջոցներ, կանխիկացնել անհրաժեշտ գումար, կատարել վճարումներ առևտրի և սպասարկման կետերում, բանկոմատների միջոցով կամ առցանց եղանակով կատարել կոմունալ և այլ տեսակի պարտադիր (տուրքերի, տուգանքների, հարկերի) վճարումներ, իրականացնել ինտերնետային առևտուր, կատարել և ստանալ քարտից քարտ փոխանցումներ:

Կարևոր է իմանալ, որ այն բանկը, որը Ձեզ տրամադրել է բանկային քարտը, կոչվում է **թողարկող բանկ**, իսկ Դուք՝ **քարտապան**: *Քարտը հանդիսանում է թողարկող բանկի սեփականություն:*

Բանկը կարող է քարտապանի համար թողարկել հետևյալ տեսակների վճարային քարտեր.

- **դեբետային քարտ՝** նախատեսված է քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում գործառնություններ իրականացնելու համար՝ քարտապանի հաշվում առկա դրամական միջոցների հաշվին,

- **հաշվարկային քարտ**՝ նախատեսված է քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում գործառնություններ իրականացնելու համար՝ քարտապանի հաշվում առկա դրամական միջոցների և Բանկի և քարտապանի միջև կնքված պայմանագրի հիման վրա թողարկողի կողմից տրամադրված վարկի (օվերդրաֆտի) հաշվին,
- **վարկային (կրեդիտային) քարտ**, որը նախատեսված է քարտապանի կողմից գործառնություններ իրականացնելու համար՝ թողարկողի կողմից քարտապանին տրամադրված վարկային պայմանագրի պայմանների համաձայն՝ վարկային միջոցների հաշվին:

Վճարային քարտի վրա, որպես կանոն, նշվում են՝

- 1) քարտապանի անուն, ազգանունը,
- 2) թողարկող բանկի անվանումը և ապրանքային նշանը,
- 3) քարտային վճարահաշվարկային համակարգի անվանումը և ապրանքային նշանը, որին պատկանում է տվյալ վճարային քարտը (սահմանված լինելու դեպքում),
- 4) վճարային քարտի համարը,
- 5) վճարային քարտի գործողության ժամկետը (սահմանված լինելու դեպքում),
- 6) քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով սահմանված այլ տվյալներ (օրինակ՝ CVV2 կամ CVC2):

Ուշադրություն. Քարտը ստանալիս *Դուք պետք է ստորագրեք քարտի դարձերեսին:* Ըստ օգտագործման տեխնոլոգիայի և տեղեկատվության պահպանման (գրառման)՝ քարտերը լինում են.

- ա. մագնիսական,
- բ. միկրոպրոցեսորային (չիպային),
- գ. հիբրիդ (համատեղված),
- դ. վիրտուալ:

Մագնիսական քարտը պատված է մագնիսական ժապավենով, որի վրա գրառվում է անհրաժեշտ տեղեկատվություն քարտի և քարտապանի վերաբերյալ: Չիպային քարտի հիմքում միկրոսխեմա է, այն ավելի ապահով է և թույլ է տալիս գրառել ավելի շատ տեղեկատվություն, քան մագնիսական ժապավենի վրա: Ներկայումս բանկերն իրենց հաճախորդներին հիմնականում տրամադրում են չիպային և մագնիսական ժապավենով համատեղված (հիբրիդ) քարտեր: Հիբրիդային քարտի վրա առկա է և՛ միկրոսխեմա, և՛ մագնիսական ժապավեն: Վիրտուալ քարտը հնարավոր է օգտագործել միայն էլեկտրոնային գնումների համար, այս դեպքում *Դուք* ստանում եք միայն քարտային տվյալներ՝ առանց իրական քարտի:

Ըստ օգտագործման վայրի քարտերը լինում են տեղային և միջազգային: Տեղային քարտերը հնարավոր է օգտագործել միայն << տարածքում, իսկ միջազգային քարտերը՝ և << տարածքում, և արտերկրում: << բանկերի կողմից թողարկվող տեղային քարտերը վերաբերում են ԱրՔա (Արմենիան Քարդ) վճարահաշվարկային

համակարգին, իսկ միջազգային քարտերը՝ Visa, MasterCard, AmericanExpress, DinersClub վճարահաշվարկային համակարգերին:

Քարտերի հետ կապված կարևոր է իմանալ նաև հետևյալ հասկացությունները:

PIN-կոդ (անհատական նույնականացման համար)՝ թողարկողի կողմից տրամադրված քարտապանին նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է քարտապանի կողմից քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով նախատեսված դեպքերում:

POS տերմինալ՝ էլեկտրոնային սարք, որը նախատեսված է առևտրի և/կամ սպասարկման կետում վճարային քարտով անկանխիկ գործառնություն կատարելու համար:

CASH տերմինալ՝ էլեկտրոնային սարք, որը նախատեսված է բանկի գլխամասային գրասենյակում և/կամ նրա մասնաճյուղերի տարածքում վճարային քարտով կանխիկացման գործառնություն կատարելու համար:

Բանկոմատ (ավտոմատ գանձման մեքենա)՝ էլեկտրոնային սարք, որը հնարավորություն է տալիս վճարային քարտից կանխիկացնելու գումարներ, կատարելու քարտից քարտ փոխանցումներ, կոմունալ վճարումներ, իմանալու քարտային հաշվի մնացորդը, ստանալու քարտային հաշվի քաղվածք և կենսաթոշակային անհատական հաշվի մասին տեղեկատվություն և այլ գործարքներ:

Օֆլայն գործարքներ՝ վճարային քարտով կատարված գործարքներ, որոնց կատարման համար չի պահանջվում թողարկող բանկի հավաստագրումը:

Օնլայն գործարքներ՝ վճարային քարտով կատարված գործարքներ, որոնք իրական ժամանակում հավաստագրվում են թողարկող բանկի կողմից:

Առանց շփման (contactless) գործարքներ՝ թողարկողի կողմից սահմանված գումարային սահմանաչափը չգերազանցող վճարային քարտով կատարված գործարքներ, որոնց կատարման ժամանակ քարտապանը չի նույնականացվում: Այս տեխնոլոգիան անվանվում է PayWave (Visa քարտերի համար) և PayPass (MasterCard քարտերի համար):